Բորիս Գելֆանդ. «ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱԽՄԱՏԻ ՊԱՊԳԱՆ Է»

18-ամյա տաղանդավոր շախմատիստ Կարեն Ասրյանը, որը երեւանյան շախմատային օլիմպիադայի գլխավոր հերոսներից մեկն էր եւ բացարձակ լավագույն արդյունքը ցույց տվեց, հերթական փայլուն հաջողությանը հասավ: Մինսկում տեղի ունեցած միջազգային ավանդական մրցաշարում Կարեն Ասրյանը 9 հնարավորից վաստակեց 7,5 միավոր, այն անցկացնելով առանց պարտության եւ գրավեց առաջին տեղը: Նույնիսկ ցուցանիշը ուներ նաեւ գրոսմայստեր Մալախովը, սակայն հայ շախմատիստը նրանից առաջ անցավ գործակիցների աղյուսակով: Կարեն Ասրյանը Մինսկում 7-րդ անգամ լրացրեց գրոսմայստերի նորման եւ ձեւականորեն չի կրում այդ բարձրագույն կոչումը ու պետք է սպասի ՖԻԴԵ-ի հերթական համաժողովին: Մինչեւ Մինսկի մրցաշարը Կարեն Ասրյանը մասնակցեց Կրասնոդարում տեղի ունեցած մրցաշարին, որը միաժամանակ հանդիսանում էր Ռուսաստանի գավաթի խաղարկության հերթական փուլը: Մեկնարկում երեխ անընդմեջ հաղթանակից հետո Ասրյանը 4-րդ տուրում պարտություն կրեց գրոսմայստեր Վոլկովից, որը հետագայում դարձավ մրցաշարի հաղթող: Իսկ Կարենը վաստակելով 5,5 միավոր 52 մասնակիցների մեջ գրավեց 11-րդ տեղը, որը նույնպես մրցանակային էր: Սակայն դա Կարենի պես տաղանդավոր շախմատիստի համար անհաջողություն էր, ելնի որ անհատական գործակիցը նվազեց երեխ կետով: Մինսկում հայ շախմատիստը պայմաններ ստեղծվեց կորցրածը հետ բերելու եւ հնարավորության դեպքում անհատական գործակիցը 20 կետով բարձրացնելու համար, որպեսզի կարողանա անցնել 2600 միավորի սահմանը, որն իրավունք է տալիս մինչեւ 20 տարեկան շախմատիստներին միանգամից մասնակցել Լաս Վեգասում դեկտեմբերին կայանալիք ինտերսիմինվյան նախագծով աշխարհի մեծահասակների առաջնությանը: Բացի այդ, 2600 եւ ավելի գործակից ունեցող շախմատիստների, որոնք հրավիրվում են մրցաշարերին կեցության ծախսերը հոգում են կազմակերպիչները: Նախատեսվում է, որ աշխարհի հերթական առաջնության մրցանակային հիմնադրամը գերազանցելու է 5 միլիոն դոլարը, իսկ առաջին փուլ մտած շախմատիստն ստանալու է 10 հազար դոլար:

Կարեն Ասրյանը Մինսկում փայլուն կատարեց իր առջեւ դրված բարդ խնդիրը: Մեկնարկում տարած հինգ անընդմեջ հաղթանակից հետո, մինչեւ վերջ տաղանդավոր շախմատիստը չգիջեց առաջին տեղը: Ընդ որում, Ասրյանը հաղթեց նաեւ նույն Վոլկովին, որին գիջել էր Կրասնոդարում: Վերջինս Մինսկում գրավեց երրորդ տեղը: Ասրյանի ցույց տված արդյունքը համապատասխանում է առակարգ բարձր գործակցի 2746 միավորի: Նա հասավ իր նոթասակին եւ անհատական գործակիցը հասցրեց 2600-ի: Տարեսկզբին նրա գործակիցը 2555 էր, սակայն Կարենն այս տարի 10-ական կետով բարելավեց իր արդյունքը Իսպանիայի Լինարես, Ուբեդա խաղաքներում եւ Նյու Յորքում տեղի ունեցած միջազգային մրցաշարերում: Այսօրվա դրությամբ 2600 գործակից ունեցող մինչեւ 18 տարեկան շախմատիստներ երեխ են գրոսմայստերներ Պետեր Լեկոն (Հունգարիա), Սերգեյ Մովսիսյանը (Չեխիա) եւ Ռուսաստ Կազիմջանովը (Ուզբեկստան): Նրանց շարերը շուտով կհամալրի Կարեն Ասրյանը: Ի դեպ, Կարենն անկախ վերը նշված տարբերակից աշխարհի մեծահասակների առաջնությանը մասնակցելու երկու այլ հնարավորություններ էլ ունի: Նա իրավունք ունի մասնակցել Հունաստանում կայանալիք աշխարհի առաջնության ընտրական փուլի մրցաշարին, որտեղ հանդես են գալու Սմբատ Լպուտյանը, Արտաշես Մինասյանը, Ատոմ Անտասյանը եւ ուրիշներ: Բացի այդ, Հնդկաստանում կայանալիք մինչեւ 20 տարեկան շախմատիստների աշխարհի առաջնության հաղթողը, որին մասնակցելու է նաեւ Կարեն Ասրյանը, իրավունք կստանա ներգրավվել Լաս Վեգասի աշխարհի առաջնությանը:

Յոհան Չվանեթոլը գլխավոր մրցանակը հանձնում է Կարեն Ասրյանին:

Մինսկի մրցաշարում Կարեն Ասրյանի անհատական գործակիցը 5-րդն էր: Նրան գերազանցում էին գրոսմայստերներ Վլադիմիր Մալանյուկը, որն անցյալ տարվա մրցաշարի հաղթողն է, Անդրեյ Խաղտովը, Օլեգ Կոռնեեւը եւ Ռուսլան Շչերբակովը: Սակայն Ասրյանը ոռեւէ ընաս չտվեց նրանց եւ շատերը զարմացել էին նրա թեթեւ հաղթանակներով: Երբ ոմանք տարակուսանքով հարցնում էին, թե ո՞վ է այս նոր շախմատիստը, հանրահայտ գրոսմայստեր Բորիս Գելֆանդն ասաց. «Մի՞թե չեք ճանաչում Կարեն Ասրյանին: Նա հայկական շախմատի ապագան է»: Տաղանդավոր պատանու խաղը բարձր է գնահատել նաեւ աշխարհի չեմպիոն Անատոլի Կարպովը: Ինտերնետով ուսումնասիրելով Կարեն Ասրյանի պարտիաները, նա ասել է, որ հայ շախմատիստը շատ հետաքրքիր է խաղարկում Կարո-Կանի սկզբնախաղն ու խելացի կերպով կիրառում իր սխեմաները:

Գրոսինգենի ավանդական մրցաշարի կազմակերպիչ եւ հովանավոր Յոհան Չվանեթոլը Մինսկում առաջին տեղի մրցանակը հանձնելով Կարեն Ասրյանին, նրան հրավիրել է մասնակցել իր մրցաշարին:

Ճանաչված գրոսմայստեր Վիտալի Յեկովսկին, որը ժամանակին մարզել է աշխարհի ներկայիս լավագույն գրոսմայստերներից մեկին Վլադիմիր Կրամնիկին, գնահատելով Կարեն Ասրյանի խաղը, ասել է, որ Կրամնիկի համեմատ Ասրյանը 18 տարեկանում ավելի լավ է խաղում եւ գերազանցում է իր հասակակիցներ ու դրությունների գնահատմամբ: Ի դեպ, Կրասնոդարի մրցաշարում Յեկովսկին հազիվ է կարողացել ոչ-ոքի խաղալ Ասրյանի հետ պարտիան փոկելով հրատ ետեւից 10 միավ հայլերով եւ վաստակելով 1500 դոլար: «Ես երազում տեսել էի, որ փող եմ տանում: Կարենի հետ պարտիան ամենաժվարն էր իմ կյանքում», ասաց Յեկովսկին:

Ավելորդ չէ նշել, որ 1996 թ. սեպտեմբերին Կարեն Ասրյանի անհատական գործակիցը 2310 էր: Ոչ լրիվ երկու տարվա ընթացքում նա այդ ցուցանիշը արդեն հասցրել է 2600-ի, այսինքն վաստակել է 290 կետ, որն արժանի է Գինեսի ռեկորդին: Տաղանդավոր պատանուն, որի հետ մասնագետները շատ մեծ հույսեր են կապում, մարզում է հայրը Արարատ Ասրյանը: Նա միշտ ուղեկցում է իր որդուն եւ, ի տարբերություն Գասպ Կամսկու հոր Ռուսաստ Կամսկու, Արարատ Ասրյանը նուրբ հոգեբան է: Հայրը որդու մեծ բերած նվաճումներով երբեմ չի հանգստանում եւ միշտ բարձր խնդիրներ է դնում Կարենի առջեւ, ընդհուպ աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Տա Աստված:

Փոր շունչ առնելուց հետո, Կարեն Ասրյանը կմասնակցի Հայաստանի առաջնությանը, իսկ սեպտեմբերին Հայաստանի առաջին հավաքականի կազմում հանդես կգա էլիսայում կայանալիք համաշխարհային օլիմպիադայում:

Կ. ԱՍՐՅԱՆ - Վ. ՊՈՊՈՎ

1. e4 c5 2. Ձf3 d6 3. d4 cd 4. Ձ:d4 Ձf6 5. Ձc3 a6 6. Փe2 e5 7. Ձb3 Փe7 8. 0-0 0-0 9. Փe3 Ըc7 10. a4 b6 11. Ըd2 Ձbd7 12. Նfd1 Նd8 13. f3 Ձc5 14. Ձ:c5 dc 15. Ըe1 Ն:d1 16. Ն:d1 c4 17. Ըf2 Նb8 18. f4 Փg4



19. fe Փ:e2 20. ef Փ:d1 21. Ձd5 Ըb7 22. Ձ:e7+ Սf8 23. fg+ Ա:e7 24. Փg5+, սեւերը հանձնվեցին:

Կ. ԱՍՐՅԱՆ - Ա. ՖՈՄԻՆԻԽ

1. e4 c5 2. Ձf3 Ձc6 3. d4 cd 4. Ձ:d4 e6 5. Ձc3 Ըc7 6. Փe2 a6 7. 0-0 Փc5 8. Ձb3 Փe7 9. f4 b5 10. Փe3 d6 11. Փf3 Ձf6 12. e5 de 13. fe Ձd7



14. Փ:c6 Ը:c6 15. Ձa5 Ըc7 16. Ըf3 0-0 17. Ը:a8 Ը:a5 18. Ըa7 b4 19. Ձe4 Ը:e5 20. Ըd4 f5 21. Ը:e5 Ձ:e5 22. Փc5 Փ:c5 23. Ձ:c5 Սf7 24. a3 ba 25. Ն:a3 Նd8 26. Նe1 Սf6 27. Նc3 g5 28. b4 h5 29. Ձd3 Ձ:d3 30. Ն:d3 Ն:d3 31. cd e5 32. Նa1 h4 33. Նa5 g4 34. g3 hg 35. hg fգ 36. d4 ed 37. gf Փb7 38. Սf2 d3 39. Աe3 g3 40. Նg5, սեւերը հանձնվեցին:

ՍԱՄՎԵԼ ԲԱԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՆՍԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ

		I	II	III	IV	V
1.	Կարեն ԱՍՐՅԱՆ	մվ	7.5	57.5	2555	2746
2.	Վլադիմիր ՄԱԼԱԽՈՎ	գ	7.5	48.5	2535	2690
3.	Սերգեյ ՎՈԼԿՈՎ	մվ	7.0	53.0	2545	2657
4.	Վլադիմիր ԲՈՒՐՄԱԿԻՆ	գ	7.0	51.0	2550	2642
5.	Վալերի ՆԵՎԵՐՈՎ	գ	7.0	49.0	2535	2604
6.	Վալերի ՊՈՊՈՎ	մվ	7.0	49.0	2505	2513
.....						
11.	Արեմ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ	մվ	6.5	52.0	2455	2546
16.	Լեւոն ԱՐՈՆՅԱՆ	մվ	6.5	46.5	2455	2569
37.	Ատոմ ՆԱԴԱՆՅԱՆ	մվ	5.5	48.5	2390	2451
38.	Արա ՄԻՆԱՍՅԱՆ	մվ	5.5	47.5	2440	2399

I - շախմատային կոչում, II - միավոր, III - Բուխոլցի գործակից, IV - էլոյի գործակիցը հունվարի 1-ի դրությամբ, V - մրցաշարի արդյունքներով էլոյի գործակիցը